

# ՄԵՐԸ ԽՈՆԱՐԶ Է

## Միրո Դասերը Մաս 4

«Մերը չի գոռոզանում, չի հպարտանում:» Ա Կորնթացիս 13:4  
Խոնարհություն – Քեզ չ'նսեմացնել բայց մտածել ուրիշների մասին և նկատի առնել նրանց շահերը առավել քան քոնը:

«Չ'սիրենք խոսքով և ոչ էլ լեզվով, այլ գործով և ճշմարտությունով:» Ա Հովհաննես 3:18

### Խոնարհության 4 սովորությունները

#### 1. Վարժեցրու քեզ՝ ուրիշներին առավելություն տալու մեջ

«Պատիվ տալու մեջ իրար առաջ անցեք:» Հռովմայեցիս 12:10

«Ոչ մի բան թող չ'լինի հակառակությամբ... այլ խոնարհությամբ մեկը միյուսին թող իր անձից ավելի լավ համարի: Միայն ձեր անձի շահերին չնայեք, այլ ամեն մեկն իր ընկերոջն էլ: Ձեզանից յուրաքանչյուրը թող այն մտածմունքն ունենա, որ Քրիստոս Հիսուսի մեջ էր. Որ Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ... ծառայի կերպարանք առնելով՝...իրան խոնարհեցրեց ու հնազանդ եղավ մինչև մահ...» Փիլիպպեցիս 2:3-8

«Թող ամեն մարդ շուտ լինի լսելու համար, և ծանր՝ խոսելու համար, և ծանր՝ բարկանալու համար:» Հակոբոս 1:19.

#### 2. Վարժեցրու քեզ՝ ուրիշներից սովորելու մեջ

«Ծաղր անողը չի սիրի իր հանդիմանիչին, նա չի գնալ իմաստունների մոտ:» Առակած 15:12

«Խրատ մերժողն իր անձն է անարգում, բայց հանդիմանություն լսողը խելք կ'շահի:» Առակած 15:32

«Միմիայն կռիվ կ'ծագի ամբարտավանությունից:» Առակ 13:10

«Ով որ իր անձը այս երեխայի նման խոնարհեցնի, նա է մեծ երկնքի արքայության մեջ:» Մատթեոս 18:4

#### 3. Վարժեցրու քեզ՝ սխալ ընդունելու մեջ

«Իր հանցանքը ծածկողը չի հաջողվի, բայց խոստովանող ու թողողը ողորմություն կ'գտնի:» Առակած 28:13

«Իրար խոստովանեցեք ձեր հանցանքները, և իրար վրա աղոթք արեք, որ բժշկվեք:» Հակոբոս 5:16

#### 4. Վարժեցրու քեզ՝ ծրագրերդ Աստծուն հանձնելու մեջ

«Աստված ամբարտավաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս:» Հակոբոս 4:6-7

«Ձեր անձերը ներկայացրեք Աստծուն... և ձեր անդամներն արդարության գործիք՝ Աստծուն:» Հռովմայեցիս 6:13

«Ձեզ վրա առեք իմ լուծը և ինձանից սովորեցեք. Որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստություն կ'գտնեք:» Մատթեոս 11:29

«Տերը ինչ է ուզում քեզանից, այլ միայն իրավունք անել, ողորմություն սիրել, և խոնարհությամբ վարվել քո Աստծու հետ:» Միքիա 6:8

Աղոթք: «Ետ դարձրու իմ աչքերը որ ունայն բան չ'տեսնեն. Բայց ապրեցրու ինձ քո ճանապարհներում:» Սաղմոս 119:37

«Խոնարհները երկիրը կ'ժառանգեն և կ'ուրախանան խաղաղության առատությունով:» Սաղմոս 37:11

<p>Հաջորդ Քարոզի Թեման</p> <p><b>ՄԵՐԸ ՀԱՐԳԵԼԻՑ Է</b></p> <p>Հովիվ Սարո Խաչիկեան</p>
---